**«Կենսաբանության միջազգային օլիմպիադա» ծրագրի բովանդակային հաշվետվություն (01.01.2022-30.06.2022)**

| Հ/Հ | Համառոտ բովանդակություն | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները | Վերջնաժամկետը | Կատարված է |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մշակված խնդիրների փորձարկում: Մասնակիցներին տրամադրվելիք պարագաների ձեռքբերում: | Սարքավորումների, նյութերի պարագաների ձեռքբերում, խնդիրների փորձարկում | Փորձարկված խնդիրներ և մասնակիցներին տրամադրվող որոշ պարագաներ | 31 դեկտեմբերի 2021թ. | 1. Կնքվել են պայմանագրեր 110 անուն նյութերի, պարագաների, սարքավորումների համար: Կնքվել են պայմանագրեր տրանսպորտային, հյուրանոցային ծառայությունների, ինչպես նաև բացման արարողության համար նախատեսված հոլոգրամի և անիմացիայի ծառայությունների համար:<br><br>2. Մշակվել է ընդհանուր առմամբ 120 խնդիր: Հանձնաժողովին ներկայացնելու համար ընտրվել է 103-ը:<br><br>3. Կենսաբանության միջազգային օլիմպիադայի միջազգային կոմիտեի կողմից ստեղծված հատուկ պորտալում տեղադրելու համար պատրաստվել են մի շարք փաստաթղթեր՝ պաշտոնական հրավեր ԿՄՕ ասոցիացիայի բոլոր անդամ պետություններին, օլիմպիադայի մասնակից աշակերտների համար մասնակցության և օլիմպիադայի կանոններին համաձայնության հայտարարագրեր: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 4. Մասնակցության հրավերն ուղարկվել է Կենսաբանության միջազգային օլիմպիադայի ասոցիացիայի 78 անդամ պետություններին և որպես դիտորդ մասնակցել ցանկացող 11 երկրների:<br><br>5. Օլիմպիադային մասնակցությունը հաստատել է 63 անդամ պետություն և 3 դիտորդ երկիր:<br><br>6. Աջակցություն է ցուցաբերվել օտարերկրյա մասնակիցներին՝ մուտքի արտոնագիր ստանալու հարցում:<br><br>7. Պորտուգալիայից փոստով ստացել ենք օլիմպիական գավաթը:<br><br>8. Օլիմպիադայի բացման և փակման հանդիսավոր արարողությունների համար միջազգային կոմիտեի գրասենյակից ուղարկվել է օլիմպիադայի մասնակից երկրների դրոշները: Դրոշները մաքսազերծվել են և վերցվել փոստային բաժանմունքից: Պատվիրվել են այն երկրների դրոշները, որոնք այդ ծանրոցում բացակայում էին:<br><br>9. Գնվել է ծրագրի տեսական փուլի անցկացման Classmarker ծրագիրը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 10. Մշակվել է գնահատման ծրագրային ապահովում:<br><br>11. Գնվել է Oly-exams թարգմանչական ծրագրային ապահովումը:<br><br>12. Կնքվել են պայմանագրեր Մարզահամերգային համալիրի և Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հետ:<br><br>13. Իրականացվել է կամավորների հավաքագրումը:<br><br>14. Օպերացիոն համակարգ է տեղադրվել ԿԳՄՍ նախարարության կողմից օլիմպիադայի համար գնված և ԵՊՀ-ին ժամանակավորապես հանձնված դյուրակիր համակարգիչների մեջ: |
| 2. | Տպագրություն | | | | |
| 3. | Կառավարչական ծախսեր | Ծրագրի անձնակազմի աշխատանքային պարտականությունների լրամշակում | Գործող կազմկոմիտե լրամշակված գործառույթներով | 31 դեկտեմբերի 2022թ. | Տրվել է աշխատավարձ: |

**Ծրագրի ղեկավար՝** **Գայանե Ղուկասյան**